Համանախագահները հույս ունեն

«Համանախագահները անկեղծորեն հույս են հայտնում, որ 2 երկու երկրների ղեկավարների հանդիպումը կկայանա եւ կհանգեցնի բանակցությունների վերսկսմանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքների մասին փաստաթղթի հիման վրա, որը կողմերին է ներկայացվել 2007 թվականի նոյեմբերի 29-ին Մադրիդում՝ ԵԱՀԿ Նախարարների խորհրդի հանդիպման բացումից առաջ»,- մարտի 19-ին Վիեննայում հայտարարել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Նրանք նշել են՝ «Ֆրանսիան, Ռուսաստանը եւ Միացյալ Նահանգները պաշտպանում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ, հետեւաբար, չեն ճանաչում Լեռնային Ղարաբաղի անկախությունը, միեւնույն ժամանակ գտնելով, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը կողմերի միջեւ բանակցությունների առարկա է: Համանախագահները համոզված են, որ հակամարտության ցանկացած խաղաղ եւ արդարացի կարգավորում պահանջելու է անխուսափելի փոխզիջումներ կողմերի միջեւ: Նրանք ընդգծում են Հայաստանի նախագահական ընտրությունների հետ կապված դադարից հետո բանակցությունների վերսկսման հրատապ անհրաժեշտությունը»: